

**ԱՇԽԱՐՀԻ ԳԱՎԱԹԻ ԵՎՐՈՊԱՅԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՄՐՑԱՇԱՐ**

**ԱՊՐԻԼԻ 26 – ՄԱՅԻՍԻ 2, 2021 ԹՎԱԿԱՆ**

**ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ**

**1. ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ**

Հայաստանի շախմատի ֆեդերացիա:

**2. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

- Մրցաշարին կարող են մասնակցել 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ 2250 և բարձր ազգային վարկանիշ ունեցող շախմատիստները:
- 2021 թվականի Հայաստանի պատանեկան առաջնությունում տարիքային խմբերում հետևյալ հորիզոնականը զբաղեցրած շախմատիստները.
  - Մինչև 10 տարեկան տղաներ – 1-ին հորիզոնական
  - Մինչև 12 տարեկան տղաներ – 1-2-րդ հորիզոնականներ
  - Մինչև 14 տարեկան տղաներ – 1-3-րդ հորիզոնականներ
  - Մինչև 16 տարեկան տղաներ – 1-3-րդ հորիզոնականներ
  - Մինչև 18 տարեկան տղաներ – 1-5-րդ հորիզոնականներ
  - Մինչև 14 տարեկան աղջիկներ – 1-ին հորիզոնական
  - Մինչև 16 տարեկան աղջիկներ – 1-2-րդ հորիզոնականներ
  - Մինչև 18 տարեկան աղջիկներ – 1-3-րդ հորիզոնականներ

Հայաստանի պատանեկան առաջնությունում 2250 և բարձր գործակից ունեցող մասնակցի կողմից վերը նշված հորիզոնականները զբաղեցնելու դեպքում, որակավորման տեղը չի փոխանցվում հաջորդող հորիզոնականը զբաղեցրած մասնակցին:

Ապրիլի 1-ի դրությամբ 2550 և բարձր ՖԻԴԵ-ի վարկանիշ ունեցող շախմատիստները չեն կարող մասնակցել մրցաշարին:

Armenian  
Chess Federation

### 3. ԺԱՄԿԵՏՆԵՐ

Մրցաշարը կանցկացվի 2021 թվականի ապրիլի 26-ից մայիսի 2-ը:

|           |                  |
|-----------|------------------|
| 26 ապրիլի | 15:00 1-ին տուր, |
| 27 ապրիլի | 15:00 2-րդ տուր, |
| 28 ապրիլի | 15:00 3-րդ տուր, |
| 29 ապրիլի | 15:00 4-րդ տուր, |
| 30 ապրիլի | 15:00 5-րդ տուր, |
| 1 մայիսի  | 15:00 6-րդ տուր, |
| 2 մայիսի  | 15:00 7-րդ տուր: |

### 4. ՄՐՑԱԿԱՐԳ

Մրցաշարը կանցկացվի ըստ ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների, շվեյցարական մրցակարգով՝ 7 խաղափուլով: Մրցաշարում հաշվարկվելու է ՖԻԴԵ-ի միջազգային գործակից: Վիճակահանության համար հիմք է ընդունվելու ՖԻԴԵ-ի գործակիցը:

Հավասար միավորներ վաստակելու դեպքում տեղերը կորոշվեն ըստ՝

- հատված բուխտուցի (-1) գործակցի,
- անձնական հանդիպման արդյունքի (գործում է միայն այն դեպքում, երբ հավասար միավորներ վաստակած բոլոր մասնակիցները խաղացել են միմյանց դեմ),
- սևերով խաղացած պարտիաների առավելագույն քանակի,
- հաղթանակների առավելագույն քանակի:

### 5. ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ

Մրցաշարում 1-6-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք կնվաճեն սեփական միջոցների հաշվին մասնակցելու աշխարհի գավաթի Եվրոպայի որակավորման առաջնությանը (մրցաշարը անցկացվելու է առցանց):

### 6. ԺԱՄԱԿԱՐԳ

90 րոպե առաջին 40 քայլի համար, այնուհետև 15 րոպե հավելում՝ մինչև պարտիայի ավարտը (30 վայրկյան հավելումով՝ յուրաքանչյուր քայլին, սկսած առաջին քայլից):

## 7. ՄՈՒՏՔԱՎՃԱՐ

Մրցաշարի մասնակցության վճարը կազմում է 5000 ՀՀ դրամ:

Փոխանցումները անհրաժեշտ է կատարել հետևյալ բանկային հաշվին՝

Ստացող՝ Հայաստանի շախմատի ֆեդերացիա հ/կ

ք. Երևան Խանջյան 50

«Արարատ» Բանկ ԲԲԸ

Հ/Հ 1510002020290100

Նպատակը դաշտում նշել՝ **աշխարհի գավաթի Եվրոպայի որակավորման առաջնության ընտրական մրցաշար, մուտքավճար, անուն, ազգանուն, հայրանուն և հեռախոսահամար:**

## 8. ԳՐԱՆՑՈՒՄ

Մրցաշարի գրանցման վերջնաժամկետն է 2021 թվականի ապրիլի 23-ը, ժամը 18:00 :

## 9. ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ

Մրցաշարը կանցկացվի Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի տանը:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Խանջյան 50:

## 10. Տեղեկատվություն

Հեռ՝ 010 55 46 47

Էլ. փոստ՝ [info@chessfed.am](mailto:info@chessfed.am)

Armenian  
Chess Federation